ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-27-Ը ՎԱՇԻՆԳՏՈՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ

Տաթևիկ Դավթյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրենի պաշտոնակատար:

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԱՄՆ՝ Վաշինգտոն, 2018թ. սեպտեմբերի 26-27-ը:

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնից (այսուհետ՝ Կենտրոն կամ ICSID):

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ(ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)

Մասնակցելու Կենտրոնի Կանոնների և Կարգավորումների (այդ թվում՝ Վարչական և ֆինանսական կանոնակարգեր, Հաշտեցման և արբիտրաժային վարույթների հարուցման ընթացակարգի կանոններ, Հաշտեցման և արբիտրաժային վարույթների անցկացման ընթացակարգի կանոններ) փոփոխությունների փաթեթի քննարկմանը:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Վարչական և ֆինանսական կանոնակարգեր, Հաստատության կանոնների, ICSID Կոնվենցիայի հիման վրա Արբիտրաժի և Հաշտարարության կանոնների, ICSID Լրացուցիչ Հավելվածի հիման վրա Արբիտրաժի և Հաշտարարության կանոնների,

ICSID Լրացուցիչ Հավելվածի հիման վրա Փաստերի Ձեռքբերման կանոնների փոփոխություններ:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպման արդյունքում փաստաթղթեր չեն ստորագրվել: Փոփոխությունների փաթեթը պետք է հաստատվի անդամ պետությունների 2/3-ի կողմից: Քվեարկությունը նախատեսվում է անցկացնել 2019 աշնանը:

8. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպման ֆորմատը "պրեզենտացիաների" ներկայացման ձևով էր ընտրված՝ Կենտրոնի Գլխավոր քարտուղարի և նրա երկու տեղակալների, ինչպես նաև Քարտուղարության այլ ներկայացուցիչների ներկայացմամբ, որին հաջորդել է հարցուպատասխանը, մեկնաբանությունները, մասնակիցների քննարկումները և ամփոփումը: Հանդիպումների ընթացքում ՀՀ ներկայացուցիչն ակտիվ մասնակցել է քննարկումներին, այլ անդամ-պետությունների և Կենտրոնի Քարտուղարության ներկայացուցիչների հետ մտքերի փոխանակմանը, ներկայացրել որոշ ՀՀ Արդարադատության նախարարություն Տաթևիկ Դավթյան 3 դիտարկումներ առաջարկվող Կանոնների վերաբերյալ, կարծիք հայտնել արտահայտված այլ դիրքորոշումների վերաբերյալ: Հանդիպումների արդյունքում այս ֆորմատի շրջանակներում համագործակցության պայմանավորվածություններ են ձեռքբերվել այլ անդամ- պետությունների ներկայացուցիչների, ինչպես նաև Քարտուղարության հետ:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության անունից ներկայացնել դիրքորոշում՝ մինչև 2018 թ. դեկտեմբերի 28-ը:

10. ԱՄԻՍ, ԱՄՍԱԹԻՎ

03.10.2018թ: